Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
շուկայի վերահսկողության տեսչական մարմնի
կառավարման խորհրդի
2019 թվականի հունվարի 11-ի որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2019 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
Ծ Ր Ա Գ Ի Ր

Բովանդակություն

1. **Ներածություն** 3

2. **Ծրագրի նպատակները** 3

3. **Ծրագրի մշակման նպատակով տեղեկատվության հավաքագրման աղբյուրները** 6

4. **Տեսչական մարմնի կողմից վերահսկվող ոլորտներում իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը** 7

5. **Ծրագրով նախատեսված միջոցառումները, ակնկալվող արդյունքները և իրականացման ժամանակացույցը** 10

1. **Ներածություն**

Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) 2019 թվականի տարեկան գործունեության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մշակման համար հիմք են հանդիսացել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N732-Լ որոշմամբ հաստատված Տեսչական մարմնի կանոնադրության դրույթները և այլ իրավական ակտեր:

Տեսչական մարմինը իրականացնում է ոչ պարենային արտադրանքների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների, չափագիտական կանոնների և նորմերի կատարման, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ վաճառքի, ինչպես նաև հարգորոշման և հարգադրոշմման պայմանների պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն՝ ապահովելով վերահսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների կանխարգելումը, այդ թվում՝ անվտանգ ոչ պարենային արտադրանքների առկայությունը շուկայում:

Ծրագիրը ներառում է նպատակները, Ծրագրի մշակման նպատակով տեղեկատվության հավաքագրման աղբյուրները, Տեսչական մարմնի կողմից վերահսկվող ոլորտներում իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը, նախատեսված միջոցառումները և ակնկալվող արդյունքը, դրանց իրականացման ժամանակացույցը, այդ թվում իրազեկման և կանխարգելման միջոցառումները:

2. **Ծրագրի նպատակները**

Ծրագրի նպատակներն է՝ ոչ պարենային արտադրանքի անվտանգության, ինչպես նաև չափագիտական կանոնների և նորմերի կատարման ապահովումը, խախտումների բացահայտումը, կանխարգելումն ու վերացումը, մասնավորապես

Տեսչական մարմինը սույն ծրագիրը կազմելիս թիրախավորել է հետևյալ ոլորտները՝

1. ավտոգազալիցքավորման ճնշակայաններ (ԱԳԼՃԿ),
2. ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք,
3. խաղալիքներ,
4. ցածրավոլտ սարքավորումներ,
5. օծանելիքակոսմետիկական արտադրանք:
6. երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք,

ԱԳԼՃԿ-ների ոլորտում առկա ռիսկերը պայմանավորված են գազի ճնշման սահմանաչափի (19.6ՄՊա) գերազանցման, ինչպես նաև վաճառքը կիլոգրամով իրականացնելու փոխարեն խորանարդ մետրով իրականացման հետ:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործող ԱԳԼՃԿ-ների կողմից սեղմված բնական գազի վաճառքը բաշխիչ աշտարակների միջոցով իրականացվում է խորանարդ մետրով՝ բաշխիչ աշտարակում առկա ստուգաչափման ենթակա գազի կշիռը որոշող չափման միջոցի ցուցմունքը բազմապատկելով գազի խտությամբ պայմանավորված գործակցով, որի տվյալը էլեկտրոնային հանգույցի միջոցով մուտքագրում է ԱԳԼՃԿ-ն շահագործող տնտեսվարող սուբյեկտը: Տեսչական մարմինը հատկապես վերջին ամիսներին հաճախ գրավոր և բանավոր ստանում է քաղաքացիներից բողոքներ՝ կապված ԱԳԼՃԿ-ների աշխատանքի հետ, այն է՝ նույն քանակի գազի լիցքավորման պարագայում ավտոտրանսպորտային միջոցով անցնում են նախկինի համեմատ քիչ հեռավորություն: Նմանատիպ բողոքները վկայում են այն մասին, որ ԱԳԼՃԿ շահագործող տնտեսվարող սուբյեկտը գազի խտությամբ պայմանավորված գործակիցը հավանաբար սահմանում է իրականից ցածր, ինչի արդյունքում վաճառված գազի ցուցմունքը (մ3) արհեստականորեն մեծանում է: Այդ ռիսկերի նվազեցման նպատակով Տեսչական մարմինը իր իրավասությունների շրջանակներում արդեն իսկ միջոցներ է ձեռնարկել, որպեսզի փոփոխություն կատարվի Հարկային օրենսգրքում՝ ակցիզային հարկ սահմանելով 1000կգ գազի

նկատմամբ և համապատասխան փոփոխություն կատարվի ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1101-Ն որոշման մեջ: 2019 թվականի ընթացքում նախատեսված է ստուգումներ իրականացնել ԱԳԼՃԿ շահագործող թվով 31 տնտեսվարող սուբյեկտի մոտ:

Ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիքի ոլորտում առկա ռիսկերը հիմնականում պայմանավորված են վառելիքի անվտանգության ցուցանիշներով: 2018 թվականի ընթացքում ստուգումներ է իրականացնել ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք ներմուծող ու իրացնող թվով 38 տնտեսվարող սուբյեկտի մոտ և վերցվել է թվով 241 դիզելային վառելիքի և ավտոմոբիլային բենզինի փորձանմուշ: Լաբորատոր փորձարկման արդյունքում փորձանմուշների 30%-ի մոտ հայտնաբերվել են ծծմբի զանգվածային մասի, ածխաջրածինների ծավալային մասի և օկտանային թվի անհամապատասխանություններ:

2018 թվականի ընթացքում ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք ներմուծող ու իրացնող 75% տնտեսվարող սուբյեկտի մոտ հայտնաբերվել են խախտումներ:

Այդ ռիսկերի նվազեցման նպատակով Տեսչական մարմինը շարունակելու է այդ ոլորտում իրականացվող խիստ վերահսկողությունը և նախատեսում է 2019 թվականի ընթացքում ստուգումներ իրականացնել բենզալցակայան շահագործող ևս 23 տնտեսվարող սուբյեկտների մոտ՝ նպատակադրվելով խախտումների տեսակարար կշիռը նվազեցնել 12-15%-ով:

Խաղալիքների, **ցածրավոլտ սարքավորումներ, օծանելիքակոսմետիկական արտադրանքի, ինչպես նաև երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի ոլորտներում** առկա ռիսկերը պայմանավորված են առանց համապատասխանության գնահատման փաստաթղթերի և հայերեն մակնշման արտադրանքի իրացմամբ: Նշված ոլորտներում բացահայտված խախտումների առնվազն 80%-ը վերաբերում են

երրորդ երկրներից (Չինաստան, Թուրքիա, Իրան, ԱՄԷ, Լիբանան, Մեքսիկա, Հնդկաստան, Ուկրաինա, Ռումինիա, Սլովակիա և այլն) ներմուծված արտադրանքներին, ինչը հաշվի առնելով Տեսչական մարմինը նախատեսում է 2019 թվականի ընթացքում ստուգումներ իրականացնել վերը նշված ոլորտներում գործունեություն իրականացնող թվով 109 տնտեսվարող սուբյեկտի մոտ՝ նվազագույնի հասցնելով վտանգավոր արտադրանքի առկայությունը շուկայում (խախտումների տեսակարար կշիռը նվազեցնել 15-17%-ով):

3. Ծրագրի մշակման նպատակով տեղեկատվության հավաքագրման աղբյուրները

Առավել ռիսկային ոլորտները և տնտեսվարող սուբյեկտները բացահայտելու, ինչպես նաև Ծրագրի իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Տեսչական մարմինը տեղեկատվություն է հավաքագրել պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից, քաղաքացիներից և այլ աղբյուրներից:

Մասնավորապես հավաքագրվել է տեղեկատվություն՝

1. ՀՀ կառավարությանն ենթակա պետական եկամուտների կոմիտեից՝ ՀՀ տարածք ներմուծված ոչ պարենային արտադրանքների վերաբերյալ,
2. <<Չափագիտության ազգային ինստիտուտ>> ՓԲԸ-ից՝ տնտեսվարող սուբյեկտների կողմից չստուգաչափված չափման միջոցների վերաբերյալ,
3. Հավատարմագրման ազգային մարմնի պաշտոնական կայքից՝ տրամադրված համապատասխանության սերտիֆիկատների և հայտարարագրերի վերաբերյալ:
4. Եվրասիական տնտեսական միության պետական գրանցման վկայականների միասնական ռեեստրից՝ արտադրանքների պետական գրանցման վերաբերյալ:
5. Համացանցից՝ իրականացված ուսումնասիրությունների միջոցով,

6. Տեսչական մարմնին և նրա <<Թեժ գիծ>> հեռախոսահամարին ստացված դիմում-բողոքների և հեռախոսազանգի միջոցով,
7. Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից՝ հաշվի առնելով ստացված առաջարկությունները,
8. ՁԼՄ-ներից:

Ծրագրի մշակման համար հիմք է հանդիսացել նաև Տեսչական մարմնի կողմից 2017-2018թթ. ընթացքում իրականացված ստուգումների արդյունքներով պայմանավորված առավել ռիսկային ոլորտների բացահայտումը՝ այն ոլորտները, որոնցում ավելի հաճախ են խախտումներ կատարվում: Ստորև ներկայացվում են այդ ոլորտները՝

1. ավտոգազալիցքավորման ճնշակայաններ (ԱԳԼՃԿ),
2. ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք,
3. խաղալիքներ,
4. ցածրավոլտ սարքավորումներ,
5. օծանելիքակոսմետիկական արտադրանք:
6. երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք,

4. Տեսչական մարմնի կողմից վերահսկվող ոլորտներում իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը

Տեսչական մարմնի 2018 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսվել էր 240 տնտեսվարող սուբյեկտի մոտ իրականացնել ստուգում, որից

1-ին եռամսյակում՝ 53,

2-րդ եռամսյակում՝ 78,

3-րդ եռամսյակում՝ 61,

4-րդ եռամսյակում՝ 48:

Տեսչական մարմնի կողմից 01.12.2018 թվականի դրությամբ իրականացրել է թվով 221 ստուգում, որից 201-ը ծրագրով նախատեսված, 15-ը ոլորտային (ավտոմոբիլային բենզինի ոլորտում), 5-ը՝ դիմում-բողոքի հիման վրա:

Առավել ռիսկային տնտեսավարող սուբյեկտներին բացահայտելու նպատակով ՀՀ կառավարությանն ենթակա պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված ՀՀ տարածք ներմուծված (այդ թվում նաև ԵԱՏՄ-ից) ոչ պարենային արտադրանքի վերաբերյալ տեղեկատվությունը համադրվել է Հավատարմագրման ազգային մարմնի պաշտոնական կայքում տեղադրված համապատասխանության սերտիֆիկատների և համապատասխանության հայտարարագրերի ռեեստրում զետեղված տվյալների հետ, ինչի արդյունքում պարզվել է, որ 2017 թվականի ընթացքում պարբերաբար և խոշոր ծավալի ոչ պարենային արտադրանք ներմուծող տնտեսվարող սուբյեկտների ընդամենը 27.4%-ն է իր կողմից ներմուծած արտադրանքը ենթարկել համապատասխանության գնահատման, իսկ 2018 թվականի ինը ամսվա կտրվածքով՝ շուրջ 32,7%-ը: Ելնելով վերը շարադրվածից ակնհայտ է, որ գրանցվել է համապատասխանության գնահատման ընթացակարգ անցած ՀՀ տարածք ներմուծված ոչ պարենային արտադրանքի աճ՝ 5.3%-ով, ինչը վկայում է ՀՀ տարածք ներմուծված ոչ պարենային արտադրանքի շուկայում անվտանգության ցուցանիշների աճի մասին:

Ստուգման արդյունքներով վերը նշված ժամանակաշրջանի ընթացքում նշանակված տուգանքների գումարը կազմել է 28.325,0 հազար ՀՀ դրամ, որից 2018 թվականի ընթացում պետական բյուջե արդեն իսկ վճարվել է 22.780,0 հազար ՀՀ դրամ՝ գանձելության ցուցանիշը կազմելով 80,4%: Գանձումների գործընթացն օրենքով սահմանված կարգով շարունակվում է:

Իրականացված ստուգումների արդյունքում 01.12.2018թ. դրությամբ 82.0% տնտեսվարող սուբյեկտների (181 տնտեսվարող) մոտ հայտնաբերվել են տարբեր բնույթի (համապատասխանության գնահատման փաստաթղթերի բացակայություն, մակնշման, չափագիտական նորմերի և այլ) խախտումներ: Տնտեսվարող սուբյեկտների 18.0%-ի մոտ (40 տնտեսվարող) խախտումներ չեն հայտնաբերվել:

Ստուգումների ընթացքում, Տեսչական մարմնի կողմից բացահայտված խախտումների և թերությունների վերացման համար տնտեսվարող սուբյեկտները 01.12.2018թ. դրությամբ դիմել և համապատասխան մարմիններից ստացել են՝

- թվով 121 համապատասխանության գնահատման փաստաթուղթ՝ սերտիֆիկատներ և հայտարարագրեր՝ նախորդ տարվա նկատմամբ գրանցելով 46% աճ (2018-ին՝ 83),
- թվով 537 չափման միջոց ենթարկվել է ստուգաչափման՝ նախորդ տարվա նկատմամբ գրանցելով 270% աճ (2018-ին՝ 145):

Տեսչական մարմնի կողմից 01.11.2018թ. դրությամբ իրականացված ստուգումների ընթացքում Տեսչական մարմնի կողմից տարեկան կտրվածքով նույն ոլորտում 18 և ավելի կիրառված ստուգաթերթերի արդյունքում հայտնաբերված խախտումների տեսակարար կշռի պատկերը ընդհանուր թվաքանակի նկատմամբ ըստ ոլորտների հետևյալն է՝

- ԱԳԼՃԿ (տեսակարար կշիռը 100%),
- խաղալիք (տեսակարար կշիռը 89%),
- ցածրավոլտ սարքավորումներ (տեսակարար կշիռը 80%),
- ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք (տեսակարար կշիռը 75%),
- երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք (տեսակարար կշիռը 63%),
- օծանելիքակոսմետիկական արտադրանք (տեսակարար կշիռը 54%),

Վերը նշվածը հաշվի առնելով Տեսչական մարմինը կազմել է իր 2019 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը՝ թիրախավորելով տվյալ ոլորտները:

Տեսչական մարմնի կողմից կարգավորվող ոլորտներում առավել ռիսկային տնտեսվարող սուբյեկտներին բացահայտելու նպատակով իրականացվում է հավաքագրված ոչ պարենային արտադրանքների վերաբերյալ տվյալների վերլուծություն: Մասնավորապես իրականացվել է. ՀՀ կառավարությանն ենթակա պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված ՀՀ տարածք ներմուծված ոչ

պարենային արտադրանքների վերաբերյալ տեղեկատվության վերլուծություն՝ վերհանելով պարբերաբար և մեծ ծավալի ներմուծումներ իրականացնող տնտեսվարող սուբյեկտները

5. **Ծրագրով նախատեսված միջոցառումները, ակնկալվող արդյունքները և իրականացման ժամանակացույցը**

2019 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված է վերահսկման ենթակա 27 ոլորտի 250 տնտեսվարող սուբյեկտ:

Տեսչական մարմնի կողմից 2019 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների թվաքանակն՝ ըստ եռամսյակների հետևյալն է.

1-ին եռամսյակում՝ 53,

2-րդ եռամսյակում՝ 78,

3-րդ եռամսյակում՝ 67,

4-րդ եռամսյակում՝ 52:

Ծրագրով նախատեսվում է 2019 թվականին իրականացնել հետևյալ հիմնական միջոցառումները՝

- **համապատասխանության գնահատման ոլորտում** իրազեկման մակարդակի բարձրացման, շուկայի ուսումնասիրության և վերահսկողական գործառույթի գործիքակազմի կիրառմամբ ապահովել համապատասխանության գնահատման ընթացակարգ անցած ոչ պարենային արտադրանք իրացնողների առնվազն 8-10% աճ,
- **չափագիտության ոլորտում** չափագիտական պետական լիազոր մարմնի հետ համագործակցության մակարդակի բարձրացման, և վերահսկողական գործառույթի իրականացմամբ ապահովել ստուգաչափված չափման միջոցների շահագործման առնվազն 6-8% աճ,
- **մակնշման ոլորտում** սպառողների իրազեկման մակարդակի բարձրացման, շուկայի ուսումնասիրության և վերահսկողական գործառույթի գործիքակազմի

կիրառմամբ ապահովել առանց մակնշման կամ թերի մակնշմամբ ոչ պարենային արտադրանքի իրացումն նվազում առնվազն 6-8%-ով,

- **<u>թանկարժեք մետաղների ոլորտում</u>** հարգորոշող և հարգադրոշմող հաշվառված անձանց կողմից ծավալած գործունեության նկատմամբ վերահսկողական լծակների արդյունավետության բարձրացման նպատակով միջոցներ ձեռնարկել թանկարժեք մետաղների անալիզատոր ձեռք բերելու ուղղությամբ, ինչը կնվազեցի հավանականությունը նշված հարգից ցածր հարգի թանկարժեք մետաղից պատրաստած իրի վաճառքը,
- **<u>ռիսկերի գնահատում՝</u>** Տեսչական մարմնի կողմից 2019թ. ընթացքում իրականացված ստուգումների արդյունքներով պայմանավորված ռիսկերի կառավարում,
- **<u>Տեսչական մարմնի գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտում</u>** առկա խնդիրների բացահայտում և համապատասխան առաջարկությունների ներկայացում, մասնավորապես
  - Մշակել ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով կսահմանվի դիտարկումներ իրականացնելու կարգը: Դիտարկումների միջոցով Տեսչական մարմնի ծառայողները հնարավորություն կունենան ավելի արագ և արդյունավետ բացահայտել խախտումները և կիրառել կանխարգելիչ միջոցներ՝ չկիրառելով տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ վարչական պատասխանատվության միջոցներ:
  - Մշակել ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով կսահմանվի տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող ոչ պարենային ապրանքների ոչնչացման կարգը: Նպատակն է բացառել վերահսկողության արդյունքում տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող ոչ պարենային արտադրանքների շուկայում կրկին անգամ ի հայտ գալուն:

- Փոփոխություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում: Սահմանված տուգանքների չափի վերանայում՝ սահմանելով կատարված խախտմանը համահունչ տուգանքի չափ:

- **<u>կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներ</u>** (ծրագիրը ներկայացված է 2-րդ հավելվածով),
- **<u>անձնակազմի կարողությունների զարգացում</u>**՝ համագործակցելով ԵԱՏՄ, ԵՄ և այլ միջազգային կառույցների, ինչպես նաև այլ մասնագիտացված շահագրգիռ մարմինների հետ՝ առնվազն մեկ դասընթացի կազմակերպում,
- **<u>դիմում-բողոքներին արձագանքում, խորհրդատվության տրամադրում</u>**:

Տեսչական մարմնի կողմից նախատեսված 2019 թվականին իրականացվելիք միջոցառումները՝ ըստ կատարման ժամանակացույցի ներկայացված են հավելված 1-ով:

Հավելված 1

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը/գնահատման չափանիշը	Կատարողը	Համակատարը	Ժամկետը
1.	2.	3.	4.	5.	6.
1.	Ոչ պարենային արտադրանքների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների, չափագիտական կանոնների և նորմերի կատարման, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ վաճառքի, ինչպես նաև հարգորոշման և հարգադրոշմման պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացում	թվով 53 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժին	I եռամսյակ
		թվով 78 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			II եռամսյակ
		թվով 67 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			III եռամսյակ
		թվով 52 տնտեսվարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում			IV եռամսյակ
2.	Համապատասխանության գնահատման ոլորտում իրազեկման մակարդակի բարձրացման, շուկայի ուսումնասիրության և վերահսկողական գործառույթի գործիքակազմի կիրառում	Համապատասխանության գնահատման ընթացակարգ անցած ոչ պարենային արտադրանք իրացնողների առնվազն 8-10% աճ,	Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն,	Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն	Տարվա ընթացքում
3.	Առաջարկության ներկայացում՝ Հարկային օրենսգրքում բարձր ճնշման գազի նկատմամբ սահմանված ակցիզային հարկի միավորային չափի փոփոխման, ինչպես նաև ՀՀ կառավարության	ԱԳԼՃԿ-ներում բարձր ճնշման գազի վաճառքի իրականացում կիլոգրամով, ինչպես նաև գազի ճնշման չափի կարգավորում (սահմանաչափն է՝ 19.6ՄՊա)	1. Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն, 2. Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժին,	-	I կիսամյակ

	2008 թվականի օգոստոսի 28-ի «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1101-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու ուղղությամբ: Ստուգումների իրականացում թվով 31 տնտեսվարող սուբյեկտի մոտ		Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն		
4.	Ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի ոլորտում թվով 23 տնտեսվարող սուբյեկտների մոտ ստուգումների իրականացում, ինչը կուղեկցվի վառելիքի փորձանմուշների ձեռքբերմամբ և լաբորատոր փորձաքննության իրականացմամբ	Շուկայահանված ավտոմոբիլային բենզինի և դիզելլային վառելիքի անվտանգության ցուցանիշների (ծծմբի զանգվածային մաս, ածխաջրածինների ծավալային մաս, օկտանային թիվ) բարելավում	Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն		Տարվա ընթացքում
5.	Խաղալիքների, ցածրավոլտ սարքավորումներ, օծանելիքակոսմետիկական արտադրանքի, ինչպես նաև երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի ոլորտներում թվով 109 տնտեսվարող սուբյեկտների մոտ ստուգումների իրականացում, որոնք ոչ պարենային արտադրանք են ներմուծում երրորդ երկրներից	Ոչ պարենային արտադրանքի շուկայահանում համապատասխանության գնահատման փաստաթղթերի ուղեկցությամբ և հայերեն մակնշմամբ	Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն		Տարվա ընթացքում

6.	Չափագիտության ոլորտում չափագիտական պետական լիազոր մարմնի հետ համագործակցության մակարդակի բարձրացման, և վերահսկողական գործառույթի իրականացում	Ստուգաչափված չափման միջոցների շահագործման առնվազն 6-8% աճ,	Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն	Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն -	Տարվա ընթացքում
7.	Մակնշման ոլորտում սպառողների իրազեկման մակարդակի բարձրացման, շուկայի ուսումնասիրության և վերահսկողական գործառույթի գործիքակազմի կիրառում	Առանց մակնշման կամ թերի մակնշմամբ ոչ պարենային արտադրանքի իրացման նվազում առնվազն 6-ից 8%-ով,	Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն,	Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն -	Տարվա ընթացքում
8.	Թանկարժեք մետաղների ոլորտում հարգորոշող և հարգադրոշմող հաշվառված անձանց նկատմամբ վերահսկողական գործառույթների իրականացում	Գործունեության համապատասխանեցում տվյալ բնագավառը կարգավորող օրենսդրությանը	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն	-	Տարվա ընթացքում
9.	Ներկայացնել առաջարկություն՝ մշակել ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով կսահմանվի դիտարկումներ իրականացնելու կարգը:	Դիտարկումների միջոցով Տեսչական մարմնի ծառայողները հնարավորություն կունենան ավելի արագ և արդյունավետ բացահայտել խախտումները և կիրառել կանխարգելիչ միջոցներ՝ չկիրառելով տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ վարչական պատասխանատվության միջոցներ:	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժին	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն, -	II կիսամյակ
10.	Ներկայացնել առաջարկություն՝ մշակել ՀՀ կառավարության	Բացառել վերահսկողության արդյունքում տեխնիկական	Իրավական աջակցության և փաստաթղթա-շրջանառության	-	II կիսամյակ

	որոշման նախագիծ, որով կսահմանվի տեխնիկական կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող ոչ պարենային ապրանքների ոչնչացման կարգը:	կանոնակարգերի պահանջներին չհամապատասխանող ոչ պարենային արտադրանքների շուկայում կրկին անգամ ի հայտ գալը:	բաժին		
11.	Ներկայացնել առաջարկություն՝ փոփոխություն կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում:	Սահմանված տուգանքների չափի վերանայում՝ սահմանելով կատարված խախտմանը համահունչ տուգանքի չափ:	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության բաժին	-	II կիսամյակ
12.	Տեսչական մարմնի վերահսկման ներքո գործող տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում	Առավել ռիսկային տնտեսվարող սուբյեկտները բացահայտելու նպատակով հավաքագրումված տվյալների վերլուծություն	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	1. Տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն, 2. Չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն	Յուրաքանչյուր կիսամյակը հաջորդող 40 օրվա ընթացքում
13.	Անձնակազմի կարողությունների զարգացում՝ համագործակցելով ԵԱՏՄ, ԵՄ և այլ միջազգային կառույցների, ինչպես նաև այլ մասնագիտացված շահագրգիռ մարմինների հետ	Կազմակերպել առնվազն մեկ դասընթաց՝ աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով	Կառուցվածքային ստորաբաժանումներ	-	Տարվա ընթացքում

Հավելված 2

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N	**Գործողություն**	**Արդյունք**	**Ժամկետ**	**Կատարող /համակատարողներ**
1.	Իրազեկում-հանդիպումներ Երևանում և ՀՀ մարզերում՝ տեխնիկական կանոնակարգման: չափագիտության և թանկարժեք մետաղների ոլորտներում օրենսդրության պահանջների վերաբերյալ	Տնտեսվարողների և քաղաքացիների՝ իրենց իրավունքների, պարտականությունների իրազեկվածության մակարդակի բարձրացում:	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին

2.	Դասընթացների, սեմինարների կազմակերպում ուսանողների և ավագ դպրոցների աշակերտների հետ:	Երիտասարդության շրջանում քաղաքացիական պատասխանատվության ձևավորում:	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
3.	Մամուլի հաղորդագրություն՝ տեսչական մարմնի ստուգումների արդյունքների և քաղաքացիներից ստացող բողքների վերաբերյալ:	Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ հանրության տեղեկացվածության բարցրացում:	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին: Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն
4.	Տեսչական մարմնի ղեկավար անձանց հարցազրույցներ:	Տեսչական մարմնի ու զանգվածային լրատվության միջոցների միջև համագործակցության բարձրացում:	Տարվա ընթացքում:	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
5.	Հանդիպումներ հասարակական կազմակերպությունների հետ:	Տեսչական մարմնի գործունեության թափանցիկության ապահովում:	Տարվա ընթացքում:	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
6.	Տեսչական մարմնի գործունեությանն առնչվող մեդիա նյութերի հավաքագրում և վերլուծություն:	Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ հանրային կարծիքի և ՁԼՄ-ների արձագանքների ամփոփում:	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
7.	Տեսչական մարմնի լոգոյի մշակում:	Տեսչական մարմնի անհատականացում	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
8.	Բուկլետների ձևավորում և տարածում	Սպառողների իրազեկման մակարդակի բարձրացում	Տարվա ընթացքում	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
9.	Տեսչական մարմին ստացված դիմում-բողոքների (թեժ գծով և գրավոր) վիճակագրության վարում, ամփոփում:	Իրավիճակի համեմատական վերլուծության արդյունքում՝ առկա խնդիրների բացահայտում:	Հուլիսի 20 2020թ-ի հունվարի 20	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
10.	Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջի տեղեկատվական սպասարկում	Թափանցիկության և իրազեկվածության բարձրացում:	Տարվա ընթացքում:	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին